

ուրիշ ամենօգտակար գործի մ'անհրա-  
 ժեշտ պէտքը . այն է մեր հասարակային  
 իրաւունքը խորհրդարանական և սահ-  
 մանադրական գրութեան մը կապելը :  
 Ասոր համար էր որ Մեր գահակալու-  
 թեան առթիւ հրատարակած առաջին  
 խաթիւն մէջ խորհրդարանի մը հաս-  
 տատութեան ստիպողականութիւնը  
 յայտնեցինք :

« Կայսրութեան ամենէն մեծ աստի-  
 ճանաւորներէ , իւլէմաներէ և պաշտօ-  
 նատարներէ կազմուել յատուկ յանձնա-  
 ժողով մը խնամով պատրաստեց Սահ-  
 մանադրութեան հիմունքն , որ յետոյ  
 քննուելով ընդունուեցաւ մեր նախա-  
 րարաց խորհրդէն :

« Այս հիմնական օրէնքը կը նուիրա-  
 գործէ վեհապետին արտօնութիւնները ,  
 Օսմանցւոց ազատութիւնն և քաղաքա-  
 յին ու քաղաքական հաւասարութիւնն  
 օրինաց առջև , նախարարաց և պաշտօ-  
 նատարաց իրաւասութիւնքն ու պա-  
 տասխանատուութիւնը , ազգային խոր-  
 հրդարանին հսկողութեան իրաւուն-  
 քը , դատական առենին կատարեալ  
 անկախութիւնը , Պիւճէղին իրական հա-  
 ւասարակշռութիւնը , վերջապէս դա-  
 ւառաց մէջ վարական տարակեցրո-  
 նացումը , առանց կեդրոնական կառա-  
 վարութեան վճռական գործողութիւնն  
 ու իշխանութիւնը տկարացնելու :

« Այս ամեն սկզբունքները Շէրիի  
 տրամադրութեանց համաձայն ըլլալէ  
 պատ , համաձայն են նաև մեր ընդու-  
 նակութեանց և բաղձանաց , ինչպէս  
 նաև ամենուն բարորութիւնն ու եր-  
 ջանկութիւնն ապահովելու վսեմ խոր-  
 հրդին , որ մեր գերագոյն փափաքն է :

« Ձիս Աստուծոյ շնորհաց և Մարգա-  
 րէին օժանդակութեան յանձնելով սոյն  
 Սահմանադրութիւնը կայսերական հա-  
 ւանութեամբ վաւերացնելէ ետև ձեր  
 ձեռքը կ'աւանդեմ , որպէս զի Աստուծոյ  
 օգնութեամբ անմիջապէս գործադրուի  
 մեր կայսրութեան ամեն երկիրներուն  
 մէջ :

« Հետևաբար իմ հաստատուն կամքս  
 է որ հրատարակէք զայս և ասոր տրա-  
 մադրութիւններն այս օրէն սկսեալ  
 գործադրել տաք :

« Նմանապէս սոյն Սահմանադրու-  
 թեան մէջ յիշուած օրէնքներն ու կա-  
 նոններն անմիջապէս խորհելու և խրմ-  
 բագրել տալու համար ամենարագ և  
 ամենագրու միջոցներ պարտիք ձեռք  
 առնուլ :

« Բարձրեան Սատուած կայսրու-  
 թեան և ազգին փրկութեանն աշխա-  
 տողներուն ջանիցն յաջողութիւն պար-  
 գևէ » :

Տուեալ յեօթներորդ աւուր Զիլհիճ-  
 ճէի 1293 :

ԱՏԵՆԱԹՍՈՒԹԻՒՆ ՄԵՍ ԵՊԱՒՈՍԻՆ

Արտասանեալ 'ի հակնիսի հրատարակութեան

ՕՍՄԱՆԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

« Մեր Օգոստոսիառ տէրը Սուլթան  
 Ապտիւլ-Համիտ Խան , սոյն Սահմանա-  
 դրութեամբ նոր իրաւունքներ կը շնորհէ  
 իւր ամեն հպատակաց . իրաւունքներ ,  
 որք իբրև պայծառափայլ լահ սիտի

լուսաւորեն զանոնք յառաջադիմութիւն  
 ու քաղաքակրթութեան ճամբուն մէջ :  
 Այս լահն է որ տգիտութեան խաւարէն  
 լուսոյ շաւիղն առաջնորդեց եւրոպիոյ  
 ազգերն , որոց ազատ օրէնքները փրկի-

արար օրինակ մ'ընծայեցին համայն տիեզերաց, և մարդկային իրաւունքն էր ճանչնալ սովորեցուցին մարդոց :

« Սոյն Սահմանագրութիւնը, զոր մեր շնորհափայլ Վեհապետն հաճեցաւ շնորհել մեզ, վսեմ գործ մ'է, որով Վեհ. Սուրբանը կայսրութեան մեծ բարեկարգել է և իւր ազգին վերանորոգիչ պիտի ըլլայ : Տեսական բարօրութեան նոր դարադրուի մը պիտի բանայ համօրէն Օսմանեան հպատակաց համար, որք մի և

նոյն Վեհապետին պաշտպանութեան ներքև կ'ապրին, և այսօր մեծ միութեամբ և լաւագոյն համաձայնութեամբ ազատութեան իսկական իրաւունքները կ'ընդունին :

« Ուրեմն մեր հայրենակցաց պարտքն է փոխադարձաբար խնդակցել, որ այսպիսի լուսաւորեալ Վեհապետի մ'ամենախիբեղի հպատակներն ըլլալու պատիւն ունին » :

ՇՈՒՎԱԼՈՎ ԿՈՄՍՆ ԵՒ ԻԳՆԱՏԻՎ ԶՕՐԱՎԱՐՆ

Կորչաբով իշխանն հիմա եօթանաս տունը ութ տարեկան է, և թէպէտ յայտնի չէ թէ ո՞վ պիտի յաջորդէ իրեն տեղը, սակայն քաղաքագէտք սկըսեր են մտածել անոր ժառանգութեանը վրայ : Արդեօք որո՞ւ պիտի վիճակի իշխանութեան և փառաց այն մեծաշուք և նախանձելի ժառանգութիւնն, զոր Կորչաբով իշխանն ասկէ քսան տարի առաջ ընդունեցաւ Նեսէլրոտ կոմսին ձեռքէն : Առ ժամս բան մը որոշ չի գիտցուիր. բայց թէ և մերձաւորագոյն ժառանգ մը չըլլայ ալ, սակայն այս ստոյգ է որ հետամուտ եղողներ կան : Ասոնց մէջ առաջին կարգի են Շուվալով կոմսն ու Իգնատիէվ զօրավարը. կան ուրիշներ ալ որ ասոնց հաւասար կամ աւելի հաւանականութիւն ունին այն բարձին հասնելու. բայց այս երկու քաղաքագէտք վերջի տարիներուս մէջ Ռուսիոյ աշխարհափարութեան նկատմամբ այնպէս լաւ շարժեցան և գործեցին, որ ամենուն մտադրութիւնն իրենց դրաւեցին :

\* \*

Շուվալով կոմսն դեռ ևս յիմնամեայ չկայ, և Ռուսիոյ մեծամեծ անուններէն

մէկուն ժառանգն է : Շուվալով կոմսին ազգատոհմը մասնաւոր կերպով անցեալ դարուն մէջ նշանաւոր եղած է : Անոնցմէ մէկն՝ Ալեքսանդր Շուվալով՝ եղիտարեթ կայսրուհւոյն ժամանակ գաղտնի դիւանատան զրուխ եղաւ. ուրիշ մ'ալ իվան Շուվալով, նոյն կայսրուհւոյն մտերիմն եղաւ, և կատարիւնէ Բ կայսրուհւոյն ժամանակ՝ այցելութեան գնաց Վոյդեռի 'ի Ֆէռնէյ, և ճոխ պարգևներ ընծայ տարաւ կայսրուհւոյն կողմանէ. նաև Մոսկուայի Համալսարանին և Գեղեցիկ արձեւատից ճեմարանին հիմնադիրն ինքն եղաւ : Գարձեալ դիւանորապէս ինքն եղած է Գաղղիոյ զրականութիւնը Ռուսիոյ մէջ սիրելի ընդոն, երբ գերմանական ազդեցութիւնը կր տկարանար : Իվան՝ Շուվալովի երկրորդ ցեղէն կը սերբեր, մինչդեռ արդի կոմսն Պետրոս Շուվալով՝ անդրանիկ ցեղէն կը սերբի : Ասոր հայրն՝ արքունեաց մեծ հազարապետ էր, որով և Պետրոս կոմսն ալ իր պատանեկութիւնէն սկսեալ կայսերական ընտանեաց մէջ մեծցած էր : Այս ամսն առաւելութեանց հետ, ունի նաև վայելչութիւն դիմաց, ընտիր կենցաղավարութիւն և յամենայնի կատարեալ ազնուականութիւն : Իր ամուս.